

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ

ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայ ազգային մատենագրությունը սկզբնավորվել է V դարի առաջին կեսին՝ հայ ժողովրդի պատմության ամենադժվարին ժամանակաշրջանում, երբ դրված էր հայ ազգի գոյության խնդիրը, և հայությունը կանգնել էր ճակատագրական երկընտրանքի առջև. կամ ձուլվել պարսիկների և հույների հետ, ասել է թե վերանալ որպես ազգություն, կամ բոլոր հնարավոր միջոցներով դիմադարձ կանգնել՝ պահպանելով ազգային դիմագիծն ու ինքնուրույն գոյությունը: Հայերն ընտրեցին այս վերջինը:

Ստեղծված պայմաններում ազգի հոգևոր և աշխարհիկ առաջնորդները գիտակցեցին, որ ազգային-քաղաքական առկա խնդիրների լուծումը հնարավոր է միայն ժողովրդի հոգեմտավոր ողջ ներուժի կենտրոնացման, ազգի սոցիալական բոլոր խավերի համախմբման, համազգային պայքարի ընդհանուր ճակատի կազմակերպման պարագայում: Այդպիսի ուժ էր Հայ եկեղեցին, որն էլ շուտով ստանձնեց ազգի փրկության առաքելությունը՝ գլխավոր դերակատարություն ունենալով երկրի գաղափարաքաղաքական և հոգևոր-մշակութային կյանքում, ազգային ամբողջականության, հատկապես **պետականության, քաղաքական անկախության կորստից հետո**¹:

Ահա այդպիսի մթնոլորտ էր տիրում Հայաստանում մինչև V դարը: Թեև մեկ դար էր, ինչ քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոնն էր, սակայն այն դեռևս լիովին չէր բացահայտել իր ներունակությունները և չէր վերածվել համազգային կրոնի, չէր դարձել ազգի հոգևոր գաղափարական միասնության խորհրդանիշ, ազգային շահերի կրող ու պաշտպան: Նշված գործառույթների իրականացումը խոչընդոտում էին ոչ միայն ժողովրդի պատմական հիշողությունը, հեթանոսական հարուստ անցյալը, աշխարհընկալման ավանդական, կայունացած ձևերի կենսունակությունը, այլև այն հանգամանքը, որ Հայաստանում քրիստոնեության տարածումը, հոգևոր կրթությունը և եկեղեցական ժամերգությունը կատարվում էին օտար՝ ազգին խորթ լեզուներով (հունարեն և ասորերեն): Այլ կերպ ասած՝ լինելով Հայաստանի պետական կրոն,

¹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 2, Երևան, 1984, էջ 12-13:

հետևաբար՝ նաև պետական գաղափարախոսություն, քրիստոնեությունը չէր դարձել **ազգային գաղափարախոսություն**²: Որովհետև ազգի սոսկ չնչին՝ հունարենին և ասորերենին տիրապետող մասն էր ի վիճակի ըմբռնելու քրիստոնեական կրոնի էությունն ու նշանակությունը: Ավելին, ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, շատերը քրիստոնեությունն ընդունել էին «ստիպված՝ իբրև մի մարդկային սովորություն, իբրև մի մոլորություն, առանց ջերմեռանդ հավատի... Ոչ թե գիտությամբ, հոյսով ու հավատով, ինչպես որ հարկն էր, այլ միայն քչերը, որոնք փոքր ի շատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտության՝ մասամբ հասկանում էին այդ [կրոնը]»³:

Բացի այդ, թեպետ Հայաստանի առաջին (387 թվական) բաժանումից հետո երկրի երկու մասերն էլ որոշակի ներքին ինքնավարություն ունեին, սակայն շուտով հարևան տերությունները վերսկսեցին կրոնագաղափարական ծուլման քաղաքականությունը, ինչն արտահայտվեց լեզվի քաղաքականության մեջ: Հայաստանի պարսկական մասում արգելվեց հունարենը, որը Հայ եկեղեցու, ուսումնակրթական համակարգի, մշակույթի, ներքին և արտաքին հարաբերությունների պաշտոնական լեզուն էր, իսկ հռոմեական մասում՝ ասորերենի ու պարսկերենի գործածումը, որոնք համանման գործառույթներ էին կատարում: Փաստորեն հարևան պետությունները ձգտում էին լեզվական գործոնի միջոցով լուծել կրոնական, գաղափարախոսական և պետական-քաղաքական խնդիրներ, որը սպառնում էր նաև վտանգել հայ ժողովրդի հոգևոր-մշակութային միասնությունը:

Ազգի հոգևոր և աշխարհիկ առաջնորդները, ճիշտ կողմնորոշվելով պատմական և քաղաքական այդ բարդ շրջադարձերում, հանգեցին հանճարեղ եզրակացության. ազգային ինքնապաշտպանության հիմնահարցի լուծման համար անհրաժեշտ է առաջին հերթին խոսակցական հայերենը դարձնել Հայ եկեղեցու պաշտոնական լեզուն: Դա նշանակում էր նաև հայերենին հաղորդել կառավարման, քաղաքական ու մշակութային գործունեության կարգավիճակ: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ազգային գրեր ունենալ: Հայ կյանքի նոր վերածնունդը կապված էր հայ գրերի ստեղծման ազգափրկիչ իրողության հետ:

² Միրումյան Ա.Կ., Հայոց գրերի գյուտի քաղաքական համատեքստը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2005, № 3-4, էջ 21:

³ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն /բնագիրը՝ Բ. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ.՝ Ստ. Մալխասյանի/, Երևան, 1987, էջ 55:

Ազգային գրերի ստեղծումը կոչված էր նաև ամրապնդելու Հայ եկեղեցու և քրիստոնեական վարդապետության դիրքերը երկրում: Երկրորդ՝ յուրատեսակ պատմեշ ստեղծելու Պարսկաստանի և նրա կողմից հովանավորվող Սասանյանների կամակատար ասորալեզու եկեղեցու դեմ: Երրորդ՝ խորացնելու Հայ եկեղեցու ազգային բնույթը, լեզվի հիմքի վրա հունական եկեղեցուց անկախ քաղաքականություն վարելու հնարավորություն ընձեռելով: Հայկական գրերի ստեղծման գաղափարը ոչ թե հասարակական զարգացման «անխուսափելի» ծնունդ էր⁴ կամ «IV-V դարերի սոցիալ-տնտեսական, քաղաքական և քաղաքակրթական մեծ տեղաշարժերի» բնական հետևանք, այլ ազգի քաղաքական մտքի փայլուն արտահայտություն:

Այսպիսի խորությամբ էր դրված հարցը, որի բարեհաջող լուծման համար առաջնահերթ արժեք էր ստանում սեփական գրի ու ազգային գրականության ստեղծումը: Համազգային նշանակություն ունեցող այդ մեծ գործի իրականացմանն են նվիրվում ժամանակի հայ նշանավոր այրերը, որոնց շարքում առաջնության դափնին մեծ գիտնական, լուսավորիչ, հանճարեղ մտածող Մեսրոպ Մաշտոցին (361-440թթ.) է պատկանում, ով ստեղծեց հայոց գրերը, թեև միաժամանակ արժանին պետք է մատուցել նաև Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևին (387-439թթ.), իր գործուն մասնակցության և Վռամ-շապուհ արքային (388-414թթ.), իր անմիջական աջակցության համար, քանի որ նրանք զորավիգ եղան Մաշտոցին և ամեն կերպ աջակցեցին հայոց գրերի ստեղծմանն ու լուսավորության տարածմանը:

Հայ գրերի գյուտի մասին հնագույն ու հիմնական աղբյուրը Մաշտոցի աշակերտ Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունն է: Կորյուն վարդապետը ոչ միայն արժանահավատ տեղեկություններ է հաղորդում իր ուսուցչի կյանքի ու մշակութային գործունեության մասին, այլև քաջատեղյակ է հայ գրերի ստեղծման հանգամանքներին:

Մեսրոպ Մաշտոցը փայլուն կրթություն էր ստացել հունալեզու դպրոցում և արդեն երիտասարդ տարիքում դարձել հայոց արքայի քարտուղարը, ապա անցել զինվորական ծառայության: Ընդունելով հոգևոր կոչում՝ մի խումբ աշակերտների ուղեկցությամբ Մաշտոցը կատարել է քարոզչական շրջագայություններ: Գողթն գավառում և Հայաստանի տարբեր գավառներում Ավետա-

⁴Հմմտ. **Аревшатян С.С.** Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973, стр. 32.

րանը ուսուցանելու ընթացքում նա լուրջ դժվարությունների առջև է կանգնում, երբ տեսնում է, որ դեռևս պահպանվել են հեթանոսական սովորույթները: Ահա հենց Գողթնում էլ: ինչպես հաղորդում է Կորյուն վարդապետը, միտք է հղանում հայոց այբուբեն ստեղծելու մասին⁵:

Գրերի ստեղծման իր ծրագրի մասին նա հայտնում է Սահակ Պարթևին և Վռամշապուհ արքային: Նրանք պատրաստակամություն են հայտնում աջակցել այս համազգային ծրագրի իրագործմանը: Սկզբում գործածում են Ասորիքից բերված և Դանիել եպիսկոպոսի մոտ պահվող հայերեն տառերը: Բայց որոշ ժամանակ հետո պարզվում է, որ «Դանիելյան նշանագրերը» չեն համապատասխանում հայերենի հնչյունային համակարգին և բավարար չեն հայերենն արտահայտելու, դասավանդելու ու թարգմանություններ կատարելու համար: Մաշտոցը մի խումբ աշակերտների հետ մեկնում է Միջագետք, այցելում ժամանակի քաղաքակիրթ աշխարհի մշակութային և գիտական կենտրոններ (Ամիդ, Եդեսիա, Սամոսատ), խորհրդակցում գիտուն մարդկանց հետ, համառ որոնումներ կատարում, կամ ինչպես նրա կենսագիրն է ասում. «Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ»⁶:

Բազմաթիվ այբուբենների ուսումնասիրության և գրի ու գրչության լավագույն սկզբունքների հաշվառման հիման վրա Մաշտոցը ստեղծագործական դժվարին որոնումների արդյունքում վերջապես հասնում է բաղձալի նպատակին, նրան հաջողվում է մեծ հմտությամբ, ինչպես նաև Աստծուն ապավինելով՝ գլուխ բերել հայոց լեզվի այբուբենի ստեղծման գործը: 405 թվականին Եդեսիայում Մաշտոցը ստեղծեց հարուստ և ինքնատիպ այբուբեն: Այնուհետև ուղևորվեց Սամոսատ, որտեղ գեղագրի՝ Հռոփանոսի օգնությամբ հղկեց ու ձևավորեց նոր տառերը: Նորագյուտ այբուբենի կատարելությունն ստուգելու նպատակով Մաշտոցն իր երկու աշակերտների՝ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ միասին սկսեց Աստվածաշնչից թարգմանություններ կատարել: Հայերեն թարգմանված առաջին նախադասությունը Սողոմոնի առակների գրքից էր. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» առաջին խորհրդանշական բառերն են՝ գրված մայրենի լեզվով, հայերեն տառերով⁷:

406 թվականին Մեսրոպ Մաշտոցը նորաստեղծ գրերով վերադառնում է

⁵ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 720:

⁶ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1980, էջ 50:

⁷ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 721:

հայրենիք, որտեղ նրան դիմավորում են մեծ շուքով ու հանդիսավորությամբ: Համընդհանուր էր ցնծությունը, հայերն արդեն ունեին իրենց սեփական գիրը:

Գրերի ստեղծումից անմիջապես հետո գլխավորապես ուշադրություն է դարձվում նախ և առաջ գրագիտության տարածմանն ու Հայաստանի բոլոր շրջաններում ազգային դպրոցների բացմանը⁸: Այս գործը կազմակերպվում է վաղորոք կշռադատված ծրագրով, որի էությունը թելադրվում էր ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքի առավել կարևոր հանգամանքներով: Այս առումով խիստ ուշագրավ է, որ կրթական գործի հեռատես և շրջահայաց կազմակերպիչները՝ Ս. Սահակն ու Մաշտոցը, ինչպես հետևում է Կորյունի մի վկայությունից, ուսուցիչներ պատրաստելու, հոգևոր դասին լուսավորելու հետ միասին հենց սկզբից իրենց ուշադրության կենտրոնում են պահել արքունիքի մարդկանց, երկրի ավագանու և կանոնավոր գործի կրթության, լուսավորության և բարոյական դաստիարակության խնդիրը, ըստ երևույթին քաջ գիտակցելով այն կարևոր դերը, որ առաջիկա ազատագրական պայքարում վերապահված էր հասարակության հենց այդ խմբերին:

Դյուրին չէր կրթամշակութային գործի ղեկավարների առջև ծառացած խնդիրը: Անհրաժեշտ էր, ինչպես գրում է Կորյունը, միանգամից երեք գործ անել՝ **թարգմանել, գրել և ուսուցանել**, որոնց իրականացմանը մեծ եռանդով ձեռնամուխ են լինում Սահակն ու Մաշտոցը՝ իրենց մերձավորագույն աշակերտների հետ միասին. «Որոց կանոն և օրինակ գիրեանց անձանց արգասիս եղեալ, և պատուիրեալ կալ ի նմին կանոնի»⁹:

Փաստորեն հայոց այբուբենի ստեղծումն անանց դեր ունեցավ ազգի հոգեմտավոր զարգացման գործում, ամուր հիմք ստեղծեց հոգևոր և մշակութային ինքնության, իսկ դրա միջոցով նաև՝ «ազգային» ու պետական անկախության «պահպանման կամ վերականգնման» նպատակով ծավալած պայքարի համար¹⁰: Բացի այդ ազգային գրերի գյուտը հուսալի հիմք ստեղծեց՝ ազատվելու հունարենի և ասորերենի «ճնշումից», այդ լեզուների միջոցով համապատասխանաբար նաև տվյալ եկեղեցիների հոգևոր, քաղաքական ու գաղափարախոսական ազդեցությունից:

Հիշյալ ծրագրի կարևորագույն կետերից էր մայրենի լեզվով եկեղեցու ժամասացական գրականության ստեղծումը: Բնականաբար առաջին շրջանում

⁸ Աբեղյան Մ., երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 136:

⁹ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 61:

¹⁰ Аревшатян С.С. Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), стр. 33-34.

կարող էր խոսք լինել թարգմանական գրականության մասին: Ուստի Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը հունական ու ասորական գիտամշակութային կենտրոններում կրթություն ստացած իրենց աշակերտների հետ ձեռնամուխ եղան քրիստոնեական գրականության հիմնական հուշարձանների, եկեղեցու հայրերի երկերի և առաջին հերթին Աստվածաշնչի թարգմանությանը, որպեսզի «իրենց ազգի դպրությունն ավելի զարգացնեն և հեշտացնեն»¹¹: Աստվածաշնչի թարգմանությունը նպաստեց հայոց լեզուն վերածելու «համազգային գրական լեզվի, պաշտոնական ճանաչում հաղորդեց կենդանի խոսակցական լեզվին»¹²:

V դարի առաջին կեսին ստեղծված թարգմանական, իսկ հետո նաև ինքնուրույն գրականությունը կոչված էր լուծելու հոգևոր-մշակութային և գաղափարաքաղաքական որոշակի խնդիրներ և հիմնականում ուղղված էր Սասանյան Պարսկաստանի կրոնական և քաղաքական զավթողականության դեմ:

Միաժամանակ Մ. Մաշտոցն ու Ս. Պարթևը գիտակցում էին, որ արտաքին ոտնձգությունների դեմ արդյունավետ պայքարելու համար անհրաժեշտ էր ընդարձակել ազգային-քաղաքական պայքարի ճակատը ու ստեղծել հուսալի թիկունք: Ուստի Մաշտոցը այբուբեն է ստեղծում նաև երկու հարևան ժողովուրդների՝ վրացիների և աղվանների համար: Այս ծրագրի իրագործմանը նպաստում էր այն հանգամանքը, որ այդ երկրների եկեղեցիները սերտորեն կապված էին հայ եկեղեցու հետ և փաստորեն «նույն սպառնալիքի տակ էին»¹³:

Մեսրոպ Մաշտոցին հաջողվում է բանակցել բյուզանդական կայսեր հետ և դպրոցներ բացել նաև Հայաստանի արևմտյան մասում (421-422թթ.): Այս իրողությունը շատ կարևոր դեր ունեցավ, քանզի նախադրյալներ ստեղծվեցին ազգի լեզվական և հոգևոր-մշակութային միասնության ապահովման, լեզվական ինքնավարության, հունական լեզվի ու գրականության ազդեցության, ինչպես նաև հունական եկեղեցու գաղափարաքաղաքական ճնշման թուլացման համար:

Հայոց գրերի ստեղծումով, իսկապես, նոր հորիզոններ բացվեցին ազգային ինքնուրույն մշակույթի հիմքերի ամրապնդման, նրա հետագա վերելքի

¹¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 123:

¹² **Аревшатян С.С.** Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), стр. 35.

¹³ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Մեսրոպ Մաշտոցը և Հայ այբուբենի և գրերի գյուտը /Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 48/:

համար: Գրագիտության տարածմանը զուգընթաց Հայաստանում ծավալվեց իր ժամանակի համար, իրոք, եզակի չափերի հասնող գրական, մշակութային հզոր շարժում: Հանուն գաղափարի և հոգևոր ինքնության դարի հրամայականը դարձավ հայալեզու գրականության ստեղծումը, որին վիճակված էր դառնալու զորավոր պատվար՝ ընդդեմ օտարի տիրապետության ու միաձուլման քաղաքականության:

Հայոց հին դպրության սկզբնավորումը տեղի ունեցավ ոչ թե աստիճանական վերընթացի, այլ զորեղ թռիչքի ձևով: Այն դեպքում, երբ հաշվի ենք առնում երկու հանգամանք: Նախ՝ ինքնուրույն պետականությունից զրկված Հայաստանի քաղաքական ծանր կացությունը, և երկրորդ՝ երբ հիշում ենք, որ տվյալ պայմաններում ազգային դպրության սկզբնավորման փուլը միաժամանակ եղավ այդ դպրության ամենաբարձր աստիճանը՝ հաջորդ մի քանի դարերի համեմատությամբ:

Հայ մատենագրությունը սկզբնավորվեց թարգմանական գրականությանը զուգընթաց: Կարելի է ասել՝ V դարի թարգմանական գրականությունը պատճառ դարձավ հայ ինքնուրույն գրականության առաջացման: Թարգմանական գրականության միջոցով հայ միտքը կապվեց արևմուտքի հետ, ծանոթացավ նրա հարուստ գանձերին, սովորեց գրական տեսակներին բնորոշ գաղտնիքները և այս բոլորով զինված՝ զարկ տվեց ինքնուրույն ստեղծագործությանը:

Հայ գրերի գյուտից հետո սկսվել էր հայ ժողովրդի պատմության նոր շրջանը՝ քրիստոնեականը, իր մշակույթով և գրականությամբ: Ինչպես տեսանք, V դարի հայ գրականությունը զարգացավ երկու ուղղությամբ՝ սկզբում թարգմանական, ապա՝ ազգային: Մաշտոցն անձամբ մասնակցեց թարգմանական թոհուրոհին, և որպես հայոց լեզվով առաջին թարգմանության հեղինակ՝ իրականում նա հանդիսացավ V դարի հայ մատենագրության սկզբնավորողը: Թարգմանություններին զուգընթաց՝ ընդամենը մի քանի տասնամյակի տարբերությամբ միանգամից հրապարակ իջան հայ ինքնուրույն գրականության առաջին նշանավոր հուշարձանները, մասնավորապես պատմագրության դասական ստեղծագործությունները, Կորյունի և Ագաթանգեղոսի, Եղիշեի և Խորենացու, Փավստոսի և Փարպեցու պատմական երկերը, ինչպես նաև Եզնիկ Կողբացու փիլիսոփայական-աստվածաբանական երկը, որոնց միջոցով ազդարարվեց ազգային մեծ գրականության ծնունդը: Սա հայ մատենագրության սկզբնավորման և ձևավորման գործընթացի մի կարևոր առանձնահատկությունն է, քանի որ այս երկերն ունեն նաև գրական-գեղարվես-

տական արժանիքներ և նպաստել են հայ գեղարվեստական արձակի սկզբնավորմանը¹⁴:

Հայ գրականության սկզբնավորման շրջանի դասական ստեղծագործությունների գաղափարական բովանդակության հիմնական միտումները, նրանց պատմափիլիսոփայական ու գեղագիտական սկզբունքները թելադրվեցին ժամանակի ազգային հասարակական-քաղաքական ու կրոնական կյանքի յուրատեսակ բարդ հանգամանքներով: Ինքնուրույն ստեղծագործության առաջին գործերը շատ քիչ էին տարբերվում թարգմանական գրականությունից, քանի որ նրանցում իշխող գաղափարները բնույթով կրոնական էին: Այդ պատճառով էլ ինքնուրույն ստեղծագործությունները ոճով նման էին թարգմանական երկերին:

Դեռևս հայ քրիստոնեական եկեղեցին ու նրա միջոցով ստեղծված նոր ըմբռնումներն ամբողջովին չէին հայացել և ազգայնացվել: Ժամանակ ու նաև մեծ աշխատանք էր հարկավոր, որպեսզի V դարի մեր ազգային ինքնուրույն գրականությունը ամենից առաջ դառնար հայ ժողովրդի պահանջների ու ձգտումների հարազատ արտահայտիչ¹⁵:

Միանգամայն ակնհայտ է V դարի մատենագրության վիթխարի նշանակությունն իր ժամանակի հայ իրականության համար: Բայց նույնչափ անվիճելի է նրա հսկայական ազդեցությունը հետագա դարերի ազգային հոգևոր մշակույթի գրեթե բոլոր բնագավառների վրա՝ ընդհուպ մինչև ուշ միջնադար, քանի որ ըստ էության կանխորոշվեց վաղ և միջին դարերի ազգային պատմագրության, գեղարվեստական զարգացման աստվածաբանական, փիլիսոփայական ու գեղագիտական մտքի հիմնական ընթացքը:

Այս է ահա մաշտոցյան դարի հայ գիր ու գրականության մեծ խորհուրդը: Սակայն, փորձենք դիտարկել հայ մատենագրության սկզբնավորման հետ կապված մի քանի կարևոր հանգամանք ևս:

1. Հայ գրականության բուռն սկզբնավորումը, անշուշտ, հանկարծախա չէր, այն նախապատրաստվել էր արդեն նախորդ դարերում: Ամենից առաջ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Հայաստանը մինչ այդ մշտական շփումների մեջ է եղել Հին Արևելքի և հատկապես անտիկ ու հելլենիստական մշակութային աշխարհի հետ: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով Հայաստանը ևս ներգրավվեց հելլենիստական ընդ-

¹⁴ Դրոյխանյան Ա., Հայ գրականության պատմություն, Երևան, 2006, էջ 5:

¹⁵ Աճառյան Հ., Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 117-118:

հանուր մշակութային աշխարհի ոլորտը: Ն.Ք. III դարի վերջերին Հայաստանում առկա է եղել մշակութային որոշակի մթնոլորտ: Հելլենիստական մշակույթը, միախառնվելով հայ ազգային ավանդներին, փայլուն արդյունք է տվել հոգևոր մշակույթի տարբեր ոլորտներում: Այս առումով առանձնապես ուշագրավ են թատերական արվեստն ու ճարտարապետությունը: Արտաշատում գործել է թատրոն, որտեղ Պլուտարքոսի վկայությամբ (Ն.Ք. 53թ.) ներկայացվել է Եվրիպիդեսի «Քաջոսուհիները» հույն ողբերգակ Յասոնի մասնակցությամբ: V-VI դարերում հայ գիտության և մշակույթի գործիչները շարունակում էին կրթվել հելլենական մշակույթի հոշակավոր կենտրոններում (Պ. Հայկազն, Դ. Անհաղթ): Փաստորեն հելլենիստական շրջանի ավանդները Հայաստանում իրենց կենսունակությունը պահպանեցին քրիստոնեության տարածման շրջանում ևս ու որոշ առումով նպաստեցին հայ մատենագրության սկզբնավորմանն ու խթանեցին նրա հետագա վերելքը:

2. Հայ գրականության սկզբնավորման գործում կարևոր դեր են կատարել նաև տեղական գրական ավանդները, հայ բանավոր և գրավոր բանահյուսությունը: Հայ ժողովուրդը, մինչև մեպրոպատառ գրականության հանդես գալը, ունեցել է հարուստ ու գեղեցիկ ժողովրդական բանահյուսություն, հնագույն բանաստեղծություն, թատրոն:

Հայագիտության մեջ բանասերներից շատերն են անդրադարձել նախամաշտոցյան հայ գրերի գոյության փաստին, կարծիքներ են հնչել օտար տառերով (հունարեն կամ ասորերեն), բայց հայոց լեզվով գրավոր գրականություն ունենալու մասին: Դժբախտաբար այդ կարծիքն ապացուցող որևէ գրավոր հատված մեզ չի հասել¹⁶: Սակայն փաստերը հնարավորություն են տալիս խոսելու Հայաստանում հեթանոսական շրջանի տեղական գրականության մասին՝ անկախ այն բանից, թե այն ինչ գրերով կամ լեզվով է ստեղծվել: Այս առթիվ պահպանվել են ճիշտ է ոչ շատ, բայց հետաքրքիր փաստեր:

Առանձնապես ուշադրության է արժանի Պլուտարքոսի վկայությունն այն մասին, որ հայոց Արտավազդ թագավորը (Ն.Ք. 55-34թթ.) հունական լեզվով հորինել է «ողբերգություններ և գրել ճառեր ու պատմական գործեր, որոնց մի մասը պահպանվել է մինչև II դար»¹⁷: Բարենացին ևս հաղորդում է հեթանոսական տաճարներում գտնվող մեհենական պատմությունների մասին,

¹⁶ **Հայրապետյան Եր.**, Պատմություն հայ մատենագրության նախաքրիստոնեական շրջանից մինչև Ժ դար, Ա մաս, Թեհրան, 1963, էջ 11:

¹⁷ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1963, էջ 254-255:

որոնցից օգտվել է «Հայոց պատմությունը» գրելիս¹⁸:

Վերը նշեցինք ժողովրդական բանահյուսության կարևոր դերը հայ հին գրականության սկզբնավորման գործում, ինչպես նաև շեշտեցինք, որ այն առաջին հայ հեղինակների հիմնական սկզբնաղբյուրն էր, իսկ վերջում փաստենք, որ այն միաժամանակ առանձնացել է ժանրային կազմի հարստությամբ (առասպել, վեպ, վիպասանք, ավանդություն, երգ և այլն), քերթողական բարձր արվեստով, պատկերի կառուցման վարպետությամբ, ոճի հղկվածությամբ, գեղարվեստական արտահայտչամիջոցների բազմազանությամբ և ինքնատիպությամբ: Դրանց մասին գաղափար կազմելու համար կարելի է հիշել Խորենացու Հայոց պատմության մեջ գողթան երգերից բառացի պահպանված հատվածը՝ վիշապաքաղ Վահագնի առասպելից, ալանաց թագավորի գեղանի դստեր՝ Սաթենիկի առևանգման պատմությունը՝ նույն պատմիչի գրքում պահպանված Արտաշեսի վեպից¹⁹:

Քրիստոնեության ընդունման հետևանքով ավելի շատ բանավոր գիտելիքներ ավանդվեցին, քան նյութական, իրեղեն արժեքներ, բայց և այնպես մեր օրերին են հասել վաղեմի հայ հեթանոսական մշակույթի գեղեցկությունն ու վսեմությունը ներկայացնող որոշ պեղմախոս վկաներ: Դրանցից են համաշխարհային ճարտարապետության հրաշալի կոթողներից Գառնիի հեթանոսական տաճարը և Անահիտ աստվածուհու բրոնզաձուլ արձանի գլուխը, որը պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում:

Դժվար չէ կոհեղել այն վիթխարի նշանակությունը, որ բանահյուսական քերթվածներն ունեցել են հայ հին գրականության սկզբնավորման շրջանում ազգային գեղարվեստական ոճի մշակման գործում: Ժամանակի պահանջների թելադրանքով Ս. Սահակն ու Մաշտոցը առաջին հերթին ձեռնարկեցին Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունը «Յոթանասնից» կոչված հունարեն բնագրից: Այդ թարգմանությունը շատ կողմերով անգերազանցելի է համարվել և օտարազգի գիտնականների կողմից արժանացել է «Թարգմանությունների թագուհի» անվանմանը²⁰: Բացի այդ այն ամբողջությամբ վկայում է Վ դարի հայոց լեզվի հարուստ ու ճոխ, ինչպես նաև պարզ ու հստակ լինելու մասին: Մի քանի տասնամյակի ընթացքում հաջորդաբար հունարենից ու ասորերենից թարգմանվեցին սուրբգրային մեկնություններ, եկեղեցական արարողակար-

¹⁸ Նույն տեղում, էջ 255:

¹⁹ Նույն տեղում, էջ 257-258:

²⁰ **Տեր-Մինասյան Ե. Գ.**, Հայ գրականության սկզբնավորությունն ու զարգացումը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1970, № 2, էջ 59:

գին նվիրված գրքեր, վաղ քրիստոնեական նշանավոր հեղինակների և «եկեղեցու հայրերի» (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Նյուսացի, Եփրեմ Ասորի, Հովհան Ոսկեբերան, Կյուրեղ Ալեքսանդրացի, Աթանաս Ալեքսանդրացի, Կյուրեղ Երուսաղեմացի և ուրիշներ) բազմաթիվ գրվածքներ: Եկեղեցական գրքերի այս հրատապ թարգմանությունն անհրաժեշտ էր՝ կրոնական, ծիսական արարողությունները հայոց լեզվով կատարելու համար: Բայց Թարգմանչաց շարժման ներկայացուցիչների հետաքրքրությունները չեն սահմանափակվել միայն կրոնաստվածաբանական գրքերի թարգմանությամբ, այլ ընդգրկել են նաև աշխարհիկ գիտությունների բնագավառը՝ փիլիսոփայություն, քերականություն, գեղագիտություն, պատմություն և այլն: V դարում և VI դարի սկզբում հայ հունական դպրոցի ներկայացուցիչների ջանքերով թարգմանվեցին անտիկ աշխարհի մեծ մտածողների՝ Արիստոտելի, Պորփյուրի ու վաղքրիստոնեական շրջանի հայտնի հեղինակների կարևորագույն գործերը, ինչպես նաև բարձրագույն դպրոցի համար նախատեսված «Գիրք պիտոյիցը» և Ալեքսանդր Մակեդոնացու կենսագրությունը²¹:

Կրոնական և գիտական բնույթի թարգմանությունները, որպես կանոն, մեզ են հասել սահմանափակ ընդօրինակություններով, իսկ գեղարվեստական երկերը պահպանվել են տասնյակ և նույնիսկ հարյուրավոր բնագրերով: Գեղարվեստական երկերի հայերեն թարգմանությունների շարքում իր հնությամբ առանձնանում են հայտնի Խիկար Իմաստունի «Պատմութիւն և խրատքը», ինչպես նաև հույն և ասորի սրբերի վարքերն ու վկայաբանությունները և զանազան այլ երկեր: Մի շարք հայերեն թարգմանությունների կցվեցին նաև հայ հեղինակների ինքնուրույն մեկնություններ:

Հայերեն հնագույն թարգմանությունների համաշխարհային նշանակությունն ընդգծվում է նրանով, որ դրանց մի մասի բնագրերը չեն պահպանվել կամ պահպանվել են ոչ ամբողջական, և հայերեն տեքստերն ունեն բնագրի արժեք: Փաստորեն հունարեն և ասորերեն գրականության մի շարք հուշարձաններ ժամանակակից քաղաքակրթության սեփականությունն են դարձել բացառապես այդ թարգմանությունների շնորհիվ: Հնագույն հայերեն թարգմանություններին բնորոշ են բնագրի բացառիկ **հարազատությունը, անաղարտությունն ու ճշգրտությունը**:

Անգլիացի արևելագետ Ֆրեդերիկ Կոնիքերը, օրինակ՝ բաղդատման

²¹ Նալբանդյան Վ.Ս., Ներսիսյան Վ.Ս., Բախչինյան Հ.Գ., Հայ միջնադարյան պատմություն, Երևան, 1986, էջ 16-17:

ճանապարհով հանգել է այն հետևության, որ Արիստոտելի երկերի հայերեն թարգմանություններն ավելի ճիշտ են վերարտադրում հունարեն բնագրերը, քան ուշ շրջանի բյուզանդական ձեռագրերը²²:

Հայ առաջին թարգմանություններն ընդլայնեցին զարգացման ավելի բարձր աստիճանի հասած ժողովուրդների հոգևոր արժեքներին հաղորդակցվելու հնարավորությունները, նպաստեցին թարգմանական արվեստի կայուն նորմերի մշակմանը, գիտական մտքի ու գեղագիտական ճաշակի զարգացմանը, նոր տերմինների ստեղծմանը, ազգային գրական լեզվի հարստացմանը: Այդ թարգմանական հարուստ գրականությունը կրթեց, դաստիարակեց հայ մտավորականության միտքն ու հոգին, նրբացրեց նրա ըմբռնումներն ու ճաշակը և դարձավ այն մղիչ ուժը, որ դրեց ու զարգացրեց ազգային ինքնուրույն բազմաժանր գրականության հիմքերը: Այդ պատճառով էլ այս արտակարգ հարուստ թարգմանական ու ինքնուրույն գրականությունը կոչվեց V դարի «Ոսկեդարյան գրականություն» ի նշանավորումն հոգևոր աննախադեպ վերելքի: Ամփոփելով կարող ենք փաստել, որ հայ գրերի գյուտի և ազգային մատենագրության ստեղծումն ու նրա թռիչքաձև զարգացումը V դարում որոշակիորեն խարսխվել է մի կողմից՝ անտիկ հելլենիստական մշակութային ավանդների ստեղծագործական յուրացման, թարգմանական գրականության վրա, մյուս կողմից՝ նրա հաստատուն հիմքն է կազմել ազգային տարրը՝ տեղական գրական ավանդներն ու նախորդ դարերի հայ ժողովրդական հարուստ բանահյուսությունը:

Հիրավի, մեսրոպատառ հայ գիր ու գրականությունը դարձան այն լայն ու լուսավոր դարպասը, որով հայ ժողովուրդը հաղորդակցվեց համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին, ճանաչեց իր անցյալը, դարերի միջով առաջ տարավ իր ավանդույթներն ու մշակույթը և ի վերջո հարատևեց՝ սերունդներին թողնելով երկու լուսավոր անուն՝ Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև:

ԱՄՓՈՓՈՒՄ

IV դարի վերջին և V դարի սկզբին Հայաստանը բաժանված էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որի արդյունքում հայ ժողովրդի վիճակը կտրուկ վատացավ: Սասանյանների կողմից փակվեցին հունական դպրոցները: Հայերն իրավունք ունեին գործածելու միայն ասորական լեզուն: Հայ

²² F. Conybeare, *Apology and Acts of Apollonios and other monuments of early Christianity*, London, 1894, p. 27.

եկեղեցուն մեկուսացման վտանգ էր սպառնում: Ընդհանուր առմամբ հայկական մշակույթը անկում էր ապրում: Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ գրերի ստեղծումը նպաստեց ազգային ինքնության և մշակույթի պահպանմանը: Մեսրոպ Մաշտոցը Սահակ Պարթևի հետ միասին հսկայական գործունեություն ծավալեց՝ հայերեն թարգմանելով Աստվածաշունչը, եկեղեցական գրականությունը, ինչպես նաև նշանավոր «եկեղեցու հայրերի», հույն փիլիսոփաների բազմաթիվ աշխատանքներ և այլ գրվածքներ: Այսպիսով, ստեղծվեց սկզբում լայնածավալ թարգմանական, իսկ հետո ինքնուրույն հայ ազգային գրականությունը, որը նպաստեց մեր ժողովրդի ազգային և մշակութային ինքնության պահպանմանը:

Բանալի բաներ – հայ ազգային մատենագրություն, հայ եկեղեցի, քրիստոնեություն, ազգային գաղափարախոսություն, հայոց այբուբեն, Մեսրոպ Մաշտոց, «Վարք Մաշտոցի», «եկեղեցու հայրեր», թարգմանական գրականություն:

СОЗДАНИЕ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЫ

НЕЛЛИ ПЕТРОСЯН

В конце IV – начале V вв. Армения была разделена между Персией и Византией, в результате чего положение армянского народа резко ухудшилось. Сасанидами были закрыты греческие школы. Армяне имели право пользоваться лишь сирийским языком. Армянской церкви грозила опасность изоляции. В целом армянская культура переживала кризис. Создание Месропом Маштоцем армянской письменности способствовало сохранению национальной идентичности и культуры. Месроп Маштоц вместе с Сааком Партевом развернули деятельность по переводу на родной язык Библии, церковной литературы, трудов многих известных "отцов церкви", греческих философов и т.д. Таким образом была создана обширная, вначале переводная, а впоследствии и оригинальная армянская национальная литература, содействовавшая сохранению национальной и культурной идентичности нашего народа.

Ключевые слова – армянская национальная литература, армянская церковь, христианство, национальное идеология, армянский алфавит, Месроп Маштоц, "Житие Маштоца", "отцы церкви", переводная литература.

THE CREATION OF ARMENIAN NATIONAL LITERATURE

NELLI PETROSYAN

At the end of the IV and beginning of V centuries Armenia was divided between Persia and Byzantium, whereby the condition of the Armenian people had sharply deteriorated. The Sassanids had closed Greek schools. The Armenians had the right to use only the Assyrian language. The Armenian Church was at the verge of isolation. Arminian culture, on the whole was in a serious decline. Mesrop Mashtots invented the Armenian alphabet in 405 AD, which was a great contribution to the maintenance of national and cultural identity and was the start for the Armenian literature. Mesrop Mashtots together with Sahak Partev did a monumental work: translated the Bible, revised and translated the national liturgy. Many works of eminent “Greek Fathers”, Greek philosophers and other scripts also passed into Armenian with their help. A huge literature comprising translated, ecclesiastical and national works was created. This proved to be a powerful factor in preserving the national and cultural sovereignty of Armenia.

Key words - Armenian national manuscripts, the Armenian church, christianity, national ideology, the Armenian alphabet, Mesrop Mashtots, The life of Mashtots (Vark Mashtotsi), fathers of the church (yegeghetsou hairer), translated literature.